

Հովհաննես Գ. Խորիկյան (Գյումրի)
Պատմ. զիկ. թեկնածու

ԼՅՈՒԿԻԱՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ*

Բանալի բառեր - Հերոդոտոս, Լյուկիա, յուլիացիներ, Քսանթոս, սատրապություն, քաղաքականություն, տեղեկություններ, Աքեմենյան տերություն, յուկիական քաղաքներ, Վարչաքաղաքական փոփոխություններ, Պատմությունները, Վարչական կացություն, «դինաստիական պրինցիպատ»:

Աքեմենյան երկիրյուրամյա տիրապետության ժամանակաշրջանի Փոքր Ասիայի պատմության ուսումնափրությունը թույլ է տալիս ավելի հստակ ներկայացնելու էթնիկական այն տեղաշարժերը, փոխազդեցությունները, Վարչաքաղաքական փոփոխությունները, որոնք տեղի էին ունենում մ.թ.ա. VI-IV դարերում պարսիկ կողմից իրականացված քաղաքականության պայմաններում: Փոքրասիական սատրապությունների վարչական կացության քննությունը ցույց է տալիս, որ այդ սատրապություններում հնդեվրոպական էթնիկական տարրի ազդեցությունը խիստ ուժեղ էր: Ներկա հոդվածում քննարկվող լուկիացիները նույնպես եղել են հնդեվրոպական լեզվաբնափական մի մասը:

Աքեմենյան Պարսկաստանի I սատրապության մեջ մտնող Լյուկիայի վարչական կառավարումը պարսիկ արքունիքի կողմից իրականացվում էր մի սկզբունքով, որն էականորեն տարբերվում էր մսացած սատրապությունների նկատմամբ կիրառվող քաղաքականությունից: Հնդ որում, այդ քաղաքականության առանձնահատկության հարցում սկզբնադրյունների սուր տեղեկությունները գրեթե համահունչ են:

Հստ Հերոդոտոսի՝ յուլիացիներն այլ ժողովուրդների հետ ներառված էին I սատրապության կազմի մեջ: Հոյս պատմիչը գրում է. «Հովհացիներից, Ասիայի մագնեսյաններից, Էլյաններից, Կարիացիներից, յուլիացիներից և միլյուացիներից և պամփուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեկը հաստատեց որպես առաջին նահանգ»: Տեղեկությունից երևում է, որ I սատրապությունը Աքեմենյան տերության այսպես ասած՝ «ամենաքաղաքացիք» Վարչական միավորներից մեկն էր, որի կազմում հիշատակված յուրաքանչյուր ժողովրդի՝ որպես առանձին վարչական ենթաշրջանի նկատմամբ պարսիկ արքունիքն ուներ

*Հոդվածն ընդունվել է տպագրության 3.02.2015:

1 Տե՛ս Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի (այսուհետև՝ Հերոդոտոս), Եր., 1986, III, 90:

իր կոնկրետ քաղաքականությունը՝ Դարեհ Ա-ից հետո պարբերաբար վերաձևելով սատրապության վարչական կառուցվածքը:

Սասանագիտական գրականության մեջ լովկիացիները ծագումով համարվում են փոքրասիական էթնոս, որի լեզուն պատկանում էր հնդեվրոպական լեզվա-ընտանիքին և կապված էր խեթերենի ու լովկիերենի հետ²: Լովկիայի տարածքը խեթական աղբյուրներում հայտնի է «Լուկկա երկրներ» անվանումով³, ըստ որում Lukkā երկիր և ժողովրդի անունը հավաքական առումով համարժեք է ամբողջ լովկիական Ասատոլիայի տարածքին⁴: Լովկիացիները հիշատակվում են եգիպ-տական տեքստերում «ծովի ժողովորդների» ասքում⁵:

Լյուկիացիները, որոնք ենել էին Քանաքոս գետի մոտից, որպես տրոյացիների դաշնակիցներ ամենաշատն են հիշատակվում «Ֆլիական»-ում և տրոյացիներից հետո նշանակությամբ երկրորդն են⁶: Վերջին տեղեկությունից կարելի է եզրակացնել, որ Լյուկիան Քանաքոսի հովիտն է: Լյուկիացիները երկու խարով են մասնակցում տրոյական պատերազմին: Սուկիական զորքի մի մասից զորավարներն են Սարպեդոնը և Գլավկոսը, իսկ մյուս մասին՝ «Պանդարոսը» ծագումով Զելեայից, Տրովադայից⁷: «Պանդարոսի մասին հիշատակությունից կարելի է եզրակացնել, թե յուկիացիների մի մասը՝ գելիական յուկիացիները, բայց են Տրովադայում կամ էլ նրանց բնակության նախնական վայրը եղել է Տրովադան, այսինքն՝ յուկիացիները էթնիկական տեղաշարժման արդյունքում հասել էին մինչև Զելեա⁸: Բացառված չէ նաև, որ խոսքը վերաբերում է բրոնզի դարաշրջանի Լուկաս ժողովրդին, որի մի հատվածը հաստատվել էր Միլերի շրջանում և ավելի ուշ՝ ուշ բրոնզի դարաշրջանի վերջում, վերաբնակվում է Քանաքոսի հովտում⁹: Հերոդոտոսի տեղեկություններից պարզվում է, որ յուկիացիները և կիլիկեցիները չեն ենթարկվել Կրետսին¹⁰: Լյուկիացիներին, որոնց ավելի ուշ նվաճում է Հարպագոսը, Հերոդոտոսը համարում է կրետական գաղթականները բնակություն են հաստատում Միլյուա երկրում, որը Հերոդոտոսի ժամանակներում մտնում էր Լյուկիայի կազմի մեջ: Հստ պատմիչի՝ յուկիացիներին հարևանները անվանում են տերմիններ, իսկ նրանց երկիրը՝ տերմինների երկիր¹²: յուկիացիներն իրենց անունը ստանում են արենացի Պանդինի որդի Լյուկոսից¹³: Լյուկիացիները

² Стю Горожанова А., Родосско-ликийский конфликт (по данным «Илиады» Гомера), «Вестник Нижегородского университета», 2008, № 5, с. 138.

³ Στίς **Επιμονή Ι.**, Υ. ιρ. υ. XII πυρή μπράψην πρωτεύειαν δάμνασθαις ή Λωζλακαίν Ιερώνωρον αρχηρό, την. 1999, έξ 23; **Garstang J., Gurney O. R.**, The Geography of the Hittite Empire, London, 1959, έξ 81, 98, 106; **Bryce T. R.**, The Lycians in Literary and Epigraphic Sources, Copenhagen, 1986, p. 2; **Payne A.**, Lycia—Crossroads of Hittite and Greek Traditions?—“Papers on Ancient Literatures: Greece, Rome and the Near East”, ed. by **E. Cingano & L. Milano**, Padova, 2008, έξ 472.

4 Стю Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, Москва, 1996, № 231.

⁵ Stu Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, 59 6.

⁶ Стю Гиндин Л.А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, 19, 229–230.

⁷ Стк. **Հովերու**, Խլիսկան, իին հունարեն բանգրից թարգմանեց Հ. Համբարձումյան, Եր. 1955, II, 825, 875; IV 115-120; V, 105: Стк. նաև **Страбон**, География в 17 книгах, перевод, статья и комментарии Г. А. **Стратановского**, Ленинград, 1964, № 529, 536, 548, 559. Ստրաբոնը զբուծ է, որ Սարդեսը կիմմերներից, տերներից քաղցի գրավել են նաև յուկիացները (անդ, № 588): Վրդյոր այս տեղեկությունը չի նշանակում, որ յուկիացները Տրփառայից դեպի այսպես ասած՝ հետագայի Լյովիսի շարժվելիս հարձակվել են Սարդեսի վրա:

⁸ Стю Гиндин Л. А., Цымбурский В. Л., Гомер и история Восточного Средиземноморья, 1923, 237-240.

⁹ See Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, 52 26, 29.
¹⁰ See above, I, 22.

10 Տես Հերոդոսու, I, 28:

11 Qun, I, 171, 173; Stu uuu Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, тж 257.

¹² Ա. Կուրտանյանը պատմում է այս գործությունը՝ հայտնաբերելու պահին: Տե՛ս Ա. Կուրտանյան, «Հայոց գրականության առաջնահատ գործությունները» (Եղանակ, 1980, էջ 172-173):

13 Տես Հերոդոտոս, I, 1/3; VII, 92:

համառ դիմադրություն են ցույց տալիս Հարպագոսին, բայց վերջինս ի վերջո գրավում է Քսանթոսը¹⁴, խեթական աղբյուրների Ավարնան¹⁵, ներկայիս Կինիկի մոտ¹⁶: Հարպագոսի (յուկիերեն՝ Arppakuh¹⁷) նվաճումից հետո Քսանթոսը դառնում է տարածաշրջանի վարչական կենտրոնը (byrta)¹⁸՝ յուկիական և իրանական իշխող վերնախասի խամսումով, որը թույլ կերպով է հունականացման ենթարկվում¹⁹: Հարպագոսից սերում են նաև Քսանթոսի մ. թ. ա. V դարի իշխող դիսաստիայի կառավարիչները²⁰:

Հերոդոտոսը հիշատակում է նաև Լյուկիայի Պատարա քաղաքը, որը նշանավոր էր իր տաճարով, որտեղ գուշակություններ էր անում քրմուիին²¹: Լյուկիացիները մասնակցում են Քսերքսեսի հելլենական արշավանքին, սակայն նրանք չեն հիշատակվում Քսերքսեսի ցամաքային քանակի կազմում, այն դեպքում, եթե պիտի հացիները և միլիացիներն ունեին յուկիական գենքեր: Լյուկիացիները հիշատակվում են պարսից քանակի նավատորմի կազմում. «Լյուկիացիները տրամադրել էին իշխուն նավ: Նրանք կրում էին լանջապաններ և սոնսպաններ, ունեին իռնի փայտից պատրաստած աղլուներ, եղեգնյա անփետուր նետեր և նիզակներ. նրանց ուսերին գցած էր այծենի, իսկ գլխին՝ փետրավոր շրջանակով գլխարկ. նրանք ունեին նաև դաշոյններ և մանգաղներ»²²: Լյուկիացիների տրամադրած նավերը ավելի քիչ էին, քան նոյն սատրապության մեջ հիշատակված հոնիացիների և կարիացիների նավերը. հոնիացիները տրամադրել էին հարյուր, իսկ կարիացիները՝ յորանասուն նավ²³: Մյուս կողմից էլ յուկիացիների նավատորմը ավելի շատ էր, քան պամփյուլիացիների և Էղիոնացիների նավատորմերի քանակը միասին վերցրած՝ քառասունվեց նավ²⁴: Նավատորմի գորավարներից էր նաև յուկիացի Կյուրեռնիսկոսը²⁵:

Ի տարրերություն Հօնիայի և Կարիայի՝ Լյուկիայի վարչական կացության վերաբերյալ անտիկ աղբյուրների տեղեկությունները համեմատաբար ժլատ են: Օրինակ՝ Լյուկիայի մասին ավելի ընդարձակ տեղեկություններ տալիս են ուժ ժամականաշրջանի հեղինակներ Արիանոսը և Ռուփոսը: Ըստ առաջինի՝ Ալեքսանդր Մակեդոնացին Կարիայից շարժվում է Լյուկիա և Պամփյուլիա, որպեսզի ծովափք գրավելով՝ թշնամու համար անօգտակար դարձնի նրանց նավատորմը²⁶: Արիանոսի տեղեկություններից պարզվում է, որ Ալեքսանդրը Հիպարնոսը գրավելուց հետո ներխունում է Լյուկիա²⁷, այսինքն՝ Հիպարնոսը Կարիայի մեջ էր: Այսուհետև Ալեքսանդրին առանց դիմադրության ենթարկվում են թելմետուցիները: Անցնելով Քսանթոս գետը՝ ներկայիս Կոչա-չայը, մակեդոնացի նվաճողը գրավում է Պինարամոսը, իսկ Քսանթոս (յուկիերեն՝ Arnna, արամերեն՝ Wrna²⁸), Պատարամս քաղաքները ենթարկվում են հոժարակամ²⁹: Պինարամոս կամ Պինարա

14 Ասդ, I, 176; Օլմուտ Ա., История Персидской империи, Москва, 2012, էջ 63.

15 Տես Քոյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորաբեկյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 23:

16 Տես “Dictionary of Greek and Roman Geography”, ed. by W. Smith, v. II, Boston, 1857, էջ 1338.

17 Տես “A Commentary on Herodotus Books I-IV”, ed. by O. Murray, A. Moreno, Oxford University Press, Inc., New York, 2007, էջ 159.

18 Ասդ, էջ 197:

19 Տես Գորожանով Ա., Политические структуры в Ликии V в. до н. э. (Проблема ассимиляции инокультурных компонентов в автохтонной среде), “Вестник Нижегородского университета”, 2012, № 6, էջ 138.

20 Տես Հերոդոտոս, I, 182:

21 Ասդ, VII, 92:

22 Ասդ, VII, 93-94:

23 Ասդ, VII, 91, 95: Դիոդորոսը յուկիացիների և պամփյուլիացիների նավերի քանակը յուրաքանչյուրի համար նշում է 40-ական (տես Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. II, Lipsiae, 1826, XI, 3, p. 7).

24 Հերոդոտոս, VII, 98:

25 Տես Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, –«Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ Արիանոս), Եր., 1987, էջ 45:

26 Ասդ:

27 Տես “A Commentary on Herodotus Books I-IV”, էջ 196.

28 Տես Արիանոս, էջ 45:

քաղաքը, Քսանթոս քաղաքից հյուսիսի, ներկայային Մինարա գյուղի մոտ²⁹, գտնվել է Քսանթոսի աջափյակին, իսկ Քսանթոսը և Պատարամոսը կամ Պատարան, ներկայային Քելեմիշը՝ ձախափյակին՝ գետաբերանից 5 կմ դեպի արևելք³⁰: Ալեքսանդրը նվաճում է նաև Պամիկուլիայից արևմտուր գտնվող Միլիաս մարզը՝ Արյուկանքս քաղաքով (ներկայիս Ազիրիչչայ գյուղի մոտ, Էլմալի-Ֆինիկե ձանապարհի վրա),³¹ որը պարսից արքունիքը անջատել էր Մեծ Փոյնոգիայից և միացրել Լյուկիային³²: Ալեքսանդրին ինքնակամ ենթարկվում է նաև Լյուկիայի ծայր արևելքում գտնվող Փասելիս քաղաքը, Պամիկուլիայի հետ սահմանին³³, որից հետո Ստորին Լյուկիայի շատ քաղաքներ ևս հպատակվում են նրան³⁴: Հետաքրքիր է, որ պիսիդիացիները Փասելիսի մոտ կառուցել էին ամրություն, որը քանդում է Ալեքսանդրը³⁵: Սա նշանակում է, որ Աքեմենյան տերության կործանման ժամանակ ուզմանական պիսիդիացիները հարավային ուղղությամբ քավականին ընդարձակվել էին՝ ի հաջիվ ոչ միայն Լյուկիայի, այլև Պամիկուլիայի: Ալեքսանդրը նվաճված բոլոր քաղաքներում նշանակում է իր կառավարիչներին:

Φωσειλίου Έλερουανηρρ շարժվում է՝ Պերգե, այսուհետև նախ՝ Սիդե (Ներկայիս Սելիմիեն), հետո՝ Սիլիոս (Ներկայիս Ասթալիայից 28 կմ դեպի հյուսիս-արևելք) և Ասպենոս. Վերջինս գտնվում էր Եվրիմետոնտոս գետի՝ Ներկայիս Քյոփհրուչայի գետաքերամից 13 կմ դեպի հյուսիս և Ասթալիայից 30 կմ դեպի արևելք³⁶. Ասպենոսից Ալեρουանդրը կրկին Վերադառնում է՝ Պերգանոս-Պեρգե (Խեթական Parha-ն), Ներկայիս Ասթալիայից 16 կմ դեպի հյուսիս-արևելք,³⁷ որտեղից պետք է անցներ Փոյուգիա: Ալերουանդր ծանապարհն անցնում էր Թելմեսոս կամ Թերմեսոս քաղաքի (Ներկայիս Ֆեթիհեն³⁸) մոտով, որի բնակիչները նախկինում տվյալները³⁹ կոչված պիսիդիացիներն էին: Ալերουանդրը չի կարողանում գրավել Թելմեսոսը և հարձակվում է պիսիդիացիների Սագալաս քաղաքի վրա, որը նույնացվել է Ազլասուն գյուղին⁴⁰, իսկ պիսիդիացիների մեկ այլ քաղաք՝ Սելգեն՝ Ասպենոսից հյուսիս, Բուօակ գյուղի մոտ⁴¹, հոժարակամ ընդունում

²⁹ "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, v. II, p. 630. Πήναρωποις φυνψοις ἦρ Παντηρηνοῖς, ήκει Παντηρωποῖς Καρπηνοῖς ψωχοταμοῖς: Στίς Στράβον, έρ 622

32. *Sēu Hphw̄snu*, ½ 45;

32 Տես Արիանոս, Էջ 45:
33 Ստրաբոն Էջ 623

33 Страбон, § 623.

35 Այս գրիպան, էջ 45-46.

³³ Հայոց, էջ 40. Վասպարի լույսուրի վաստի որշակափառ է, օդիդարա չարքաթաղբյուր. Տաճ ՀԱՅԱԿ
Կարանձկու, Պերող օնբացու մօր, «Վեցուն գրքի արքա», 1988, N 2, с. 262: Փատկին
նվազում է Կիսնոր և ստիպում վաստիլուցիներին դաշնակցել իր հետ: Տե՛ս Պլուտր, Կիմոն, XII,
«Ինքնական աշխատանք», տ. II, Մոսկվա, 1987, էջ 96.

36 Տիւ Արխանս, էջ 47–48; Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, էջ 81, 649, 653.

³⁷ *Siu Bryce T.*, The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, 52 538.

³⁸ Ասու, էջ 698; “Dictionary of Greek and Roman Geography”, ed. by W. Smith, v. II, էջ 1122.

³⁹ Σέαν *Pliny*, *Natural History*, XXIV, 94, p. 292. Οηλήματάρην αχισαρθρωφυλακών αποιμόνη νηγ-
ναύαντιν είναι υψηλήτηασθερήν, σωματιδιού προτραπανόν Κοηρη Λικηρη ήκησαντακουπί έντραν: Αιμαψηρή
αχισαρθρωφυλακών νάνις φροντιστή, έτοι μηνιαλήμηρη βάνακηζηνθερη υπεριμπατέρην έναν: Σέαν *Страбон*, έξι 12,
520, 591: Λεπήνωνταρη Καρπαλημηρη θερημεταπορη Οινήνωνηαν, χριφοντημητη ήηγιαντη-αρετηληρητη ζηνηνηρη
αχισητηακων θερημεταπορη ήτετ:

40 Stu "Dictionary of Greek and Roman Geography", ed. by W. Smith, v. II, § 873.

41 Անդ, էջ 955:

Է մակեղոնացիների հշխանությունը⁴²: Ի վերջո բոլոր պիսիդիացիներն էլ ենթարկվում են Ալեքսանդրին⁴³:

Արիանսկի՝ վերևում բերված տեղեկությունները հետաքրքիր են ոչ միայն Լյուկիայի, այլև վերջինիս հարևան սատրապությունների համար: Այսպես, Արիանսուր նշում է, որ Փատելիսը՝ Ներկայախո Թերքիրովան՝ Ասթալիայից 50 կմ հարավ-արևմտուր⁴⁴, Լյուկիայի քաղաքն է, այն դեպքում, երբ չի նշում, որ Պերգեն, Սիրեն, Սիլիոսը, Ասպենոնս⁴⁵ արդեն Պամփոլիայի մեջ են: Թեկմետուր, Սագալասը, Մելգեն պիսիդիական քաղաքներ են, որոնք, ինչպես նաև պիսիդիական բոլոր հողերը, վարչական առումով մտել են Մեծ Փոյուգիայի կազմի մեջ, քանի որ Պերգամոսից հյուսիս Արիանսոի համար Փոյուգիա է: Մյուս կողմից հետաքրքիր է, որ ոչ Լյուկիայում, ոչ էլ Պամփոլիայում և Պիսիդիայում Ալեքսանդրը չի կովում կամ բանակցում որևէ պարսկի սատրապի հետ:

Արիանոսի տեղեկություններից պարզվում է, որ նշված երկրներում պարսից արքունիքը տվյալ ժամանակաշրջանում չի ունեցել սատրապներ, և այդ երկրները, ավելի ճիշտ՝ այդ երկրներում գտնվող քաղաքները վարչական տեսանկյունից առանձին-առանձին կամ մի քանիսի կողմից ստեղծված դաշնությունների ձևով են ենթարկվել պարսից արքունիքին⁴⁶:

Պատահական չէ, որ Ալեքսանդրը ևս գրավված տարածքներում սատրապներ չի նշանակում, այլ քաղաքների կառավարում հանձնում է իր կողմից նշանակված կառավարիչներին: Ասպետնդոցիները երկրորդ անգամ ենթարկվում են Ալեքսանդրին ավելի խիստ պայմաններով, այն է՝ ենթարկվելու էին Ալեքսանդրի կողմից նշանակված սատրապին⁴⁷, որի մասին դժվար է ասել՝ քաղաքի կառավարիչն էր, թե Պամփոլիայի սատրապը, քանի որ Արիանոս այլ տեղեկություններ չի հաղորդում: Պիհնիոս Ավագն էլ, օրինակ, նշում է, որ Լյուկիան նախկինում ունեցել է 70 քաղաք, որոնց թիվը հեղինակի ժամանակ 36 էր⁴⁸, ինչն, անկասկած, կարող է վկայել, որ Լյուկիայի վարչական կացությունը Աքեմենյան տիրապետության ժամանակ ունեցել է իր առանձնահատկությունը, քանի որ սատրապական վարչակարգի մասին տեղեկություն չկայ: Արիանոս մեկ այլ տեղեկության մեջ ևս նշում է, որ Ալեքսանդրի գրաված երկներից էին նաև Լյուկիան և Պամփոլիան⁴⁹: Ալեքսանդրը Նեարքոսին նշանակում է Լյուկիայի և մինչև Տավրոս ընկած հողերի սատրապ⁵⁰:

Սուփիսն առանց մանրամասների հաղորդում է, որ Ալեքսանդրը գրավել է Լյուկիան և Պամփյուլիան⁵¹: Համաձայն պատմիչի՝ Ալեքսանդրի մահից հետո Լյուկիան Պամփյուլիայի և ՄԵծ Փոյուգիայի հետ միասին անցնում է Աստիգռոնոսին, որին Աստիպատրուս նույնակա հանձնում է ՄԵծ Փոյուգիայի և Լյուկիայի կառավարում՝ առանց Պամփյուլիան հիշատակելու⁵² (վերջինիս տարածքը, հավանա-

42 Տես Արիանոս, էջ 50:

43 Ալեքսանդր արշավանքը Լուկիայով, Պամփոլիայով, Պիսիդիայով համառոտ Նկարագրություն է նաև Պլոտինոսը: **Տե՛ս Պլուտարք**, Աлексանդր, XVII, XVIII, “Избранные жизнеописания”, т. II, Москва, 1987, с. 377-378: Պարսիկ տերթիկներում նիս եղուսմ է որ Փասելիս Պամփոլի հայի մեջ էր:

⁴⁴ See Bryce T., The Routledge Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, 59–551.

44 *Sacred Books* 1, The Complete Handbook of the Peoples and Places of Ancient Western Asia, § 55.
45 Πέρηστον, Οιχετόν, Λαωθέντην περιήγησις την Ασίαν και την Ευρώπην ήταν η πρώτη αρχαία γεωγραφία της Αρχαίας Ελλάδας. Το έργο του Πλίνιου της Νατούρας ήταν η πρώτη αρχαία γεωγραφία της Αρχαίας Ρωμαϊκής Αυτοκρατορίας.

46 ቅርቡ እና ስራውን የሚከተሉ ሰነድ የሚያስቀርብ ይችላል፡፡ የሚከተሉ ሰነድ የሚያስቀርብ ይችላል፡፡

47 Տես Արիանոս, էջ 49:

⁴⁸ Stu Pliny, Natural History, XXVIII, 101, § 296.

49 Տես Արիանոս, էջ 200:
50 Արքա կ օդ Շահ առ աւ

50 Անդ, էջ 95; Olmstead A. T., History of the Persian Empire, Third Impression, Chicago, 1960, էջ 514.

⁵¹ Տե՛ս Խոսկոս, Վլեբասնդր Մակեդոնացու պատմությունը, «Ալեքսանդր Մակեդոնացի», Եր., 1987,էջ 279:

52 Աղ., էջ 596: Տես նաև Դիտորդոս Միկիիացի, Պատմական գրադարան, թարգմ. Բնագրից, առաջարան և ծանոթագրություններ Ս. Կրկնաշարյանի, Եր., 1985, էջ 110, 113:

բար, նոյնպես Աստիգոնոսի Ենթակայության տակ էր):Դիոդորոս Միկիիացին գրում է, որ առասպեկտական Նինոս թագավորը, որի անվան տակ թաքնված է Աքեմենյան Կյուրոս Մեծը, բազմաթիվ երկրների շարքում նվաճում է նաև Լյուկիան և Պամփյուլիան⁵³: «Սատրապների մեծ ապստամբության» ժամանակ յուկիացիները, պամփյուլիացիները, պիսիդիացիները նոյնպես հարում են ապստամբությանը⁵⁴: Վերջին տեղեկությունից երևում է, որ նշված ժողովուրդները չեն ունեցել սատրապական կառավարման համակարգ, և յուկիական, պամփյուլիական, պիսիդիական քաղաքներն իրենք են հարել ապստամբությանը:

Լյուկիանան քաղաքների դիմացաւները հաճախ պատերազմում էին ոչ միայն մեկմեկու հետ, այլև նույնիկ ապստամբում էին պարսիկների դեմ: Մ.թ.ա. 466 թվականին՝ Եվրիմետոնոսոս գետի մոտ տեղի ունեցած ծակատամարտից հետո, լուկիացիները կարիքացիների հետ մտնում են Դելույան լիգայի մեջ՝ դառնալով հարկատու⁵⁸:

Լյուկիացիները հիշատակվում են նաև մ.թ.ա. 454–453 թվականի Ալեքսանդրան հարկացուցակում, ընդ որում՝ նախկին յուկիական Թելմեսոս քաղաքը վարչական առումով Կարիայի կազմում էր, իսկ հարկային առումով՝ Լյուկիայի հետ⁵⁹: Լյուկիայում տեղի էին ունենում նաև ներքին պատերազմներ: Վյապես, արևելյան Լյուկիայի դիմաստներից մեկը՝ Պերիկլեսը (380–360), գրավում է Թելմեսոսը և իրեն անկախ հայտարարում⁶⁰:

Այսպիսով, կատարված քննությունը ցույց է տալիս, որ Աբեմենյանների գերիշխանությունը տերության տարբեր հատվածներում ուղղված էր հարկերի հավաքմանը և պատերազմների ժամանակ հայտակ ժողովորդներից գործերի հավաքագրմանը։ Այս քաղաքականությունը սատրապություններում իրականացվում էր տարբեր միջոցներով, և պատահական չէ, որ Լյուկիայում Աբեմենյանների գերիշխանության հաստատումը ունեցավ իր յուրահատուկ դրսւորումը։ Վերևում բերված տեղեկությունների քննությունը ցույց է տալիս Լյուկիայում սատրապական կառավարման բացակայության մասին։ Եվ Հարպագոսը, և Ալեքսանդրը Լյուկիան նվաճելիս ուզմական կամ դիվանագիտական հարաբերություններ են ունեցել լուկիական քաղաքների հետ, որոնցից ամենանշանավորը Քսանթոսն էր՝ լուկիական դինաստիական համակարգի վարչատարածքային կենտրոնը⁶¹։

53 Դիոռորու Սիկի իազի, էջ 17:

54 Անդ, էջ 75:

55 Stū Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 109; Дандамаев М. А., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985, с. 197.

56 Stu Weiskopf M., The so-called "great Satrap's revolt": 366–360 B.C., "Historia", Heft 63, Stuttgart, 1989, pp. 65, 68.

57 Стю Олмстед А., История Персидской империи, с. 423; Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 47, 111.

58 **Шту Олмстед А.**, նոյն տեղում. Էջ 295; **Bryce T. R.**, The Lycians in Literary and Epigraphic Sources, pp. 103, 105. Համար. Մելքսանդրոսի արքավանը դեպի Կարիս և Լյուկիս (տես **Фукидид**, История, пер. **Ф. Мищенко**, Москва, 2012, с. 108):

⁵⁹ Stū "The Athenian Tribute Lists", by B. D. Meritt, H. T. Wade-Gery, M. F. McGregor, vol. III, Princeton, New Jersey, 1950, pp. 25, 27.

⁶⁰ Stu Bryce T. R., The Lycians in Literary and Epigraphic Sources, p. 112; Payne A., Lycia—Crossroads of Hittite and Greek Traditions? p. 473.

61 С्�тён Баранов Д., Ликийская династическая система VI-V веков до н. э., “Вестник Воронежского государственного университета”, 2010, N 2, № 55. Липцихагенберг филология лакун тарретири ժողովուրդների հետ միասին Վերաբնակեցվում են Նիփպորի մոտ գտնվող գյուղերում, որոնք կոչվում են Նրանց անուններով: Լյուկիացի ռազմական գաղութաբնակերը հայտնի էին Տարմուլա

Մասնագիտական գրականության մեջ նշվել է, որ լյուկիական քաղաքները կառավարվում էին տոհմային արիստոկրատիայի ներկայացուցիչների՝ դինաստների կողմից, ինչը հաստատում են լյուկիական դինաստիական քարոզության տեխստերը⁶²: Հետաքրքիրն այն է, որ Աքեմենյան արքաները «անձնական ունիա» էին հաստատում ոչ թե տիրանների, այլ իրենց գերիշխանությունն ընդունած լյուկիական քաղաքների տիրապետող ընտանիքների՝ ամբողջական տոհմային հետ⁶³: Լյուկիական դրամներին պատկերված դինաստներն ունեն պարսկական գլխարկներ, և նման դրամները կոչվում են «սատրապական տեսակի»⁶⁴: Սյուս կողմից էլ պետք է նկատի ունենալ, որ, ենթելով Լյուկիայի քաղաքական մասնատվածությունից և էթնիկական խայտաբղետությունից, Աքեմենյան թագավորները չեն ուզում կամ հետաքրքրված չեն բոլոր դինաստների հետ առանձին հարաբերություններ հաստատել: Հետևաբար դինաստների համադաշնությանը փոխարինեց «դինաստիական պրինցիպատի» պարսկական տարբերակը, երբ մնացած դինաստները ենթարկվում էին ամենասուժեղ և ազդեցիկ ընտանիքներին, տվյալ դեպքում՝ Քսանթոսի դինաստին, իսկ Քսանթոսը, բնականաբար, պարսից արքունիքի համար դաշնում էր Լյուկիայի գլխավոր հարկային կենտրոնը⁶⁵:

Ըստ որում՝ լյուկիական «դինաստիական պրինցիպատի» ընդհանրապես կրկնում է Աքեմենյան տերության քաղաքական կառավարման համակարգը, երբ Լյուկիայի տարածքը ներկայանում է որպես պարսից տերության առանձին «միկրոկոսմոս», որտեղ՝ Քսանթոսի դինաստը իր վասաների նկատմամբ ուներ այն նույն դերն ու նշանակությունը, ինչ որ Աքեմենյան արքաներն իրենց ենթակա սատրապների և կայսերական պաշտոնյաների նկատմամբ⁶⁶:

Հովհաննես Գ. Խորիկյան - Զքաղվում է հին և միջնադարյան Իրանի, Այսրկովկասի, Առաջավոր Ասիայի, Հայաստանի քաղաքական պատմության, պատմական աշխարհագրության, էթնիկական հիմնախնդիրների հետազոտությամբ: Հեղինակ է երկու մենագրությունների («Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ», Եր., 2010; «Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում» (պատմաաշխարհագրական ուսումնահրություն), Եր., 2014) և ավելի քան 20 հոդվածների:

անոնով: Տե՛ս Դանդամաև Մ. Ա., Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э., էջ 362, 441.

62 Տե՛ս Горожанова А., Политические структуры в Ликии V в. до н. э., էջ 139.

63 Տե՛ս Баранов Д., Ликийская династическая система VI-V веков до н. э., էջ 56.

64 Ասու:

65 Ասու, էջ 57:

66 Տե՛ս Bryce T., Political Unity in Lycia during the “Dynastic” Period, –“Journal of Near Eastern Studies”, 1983, vol. 42, № 1, էջ 41-42.

Summary

LYCIA IN THE SYSTEM OF ADMINISTRATIVE DIVISION OF ACHAEMENID PERSIA

Hovhannes G. Khorikyan (Gyumri)

Key words: Herodotus, Lycia, Lycians, Xanthos, Satrapy, Politics, Data, Achaemenid Empire, Administrative and Political Changes, Administrative State, «Dynastyc Principe»

Administrative governance of Lycia, part of the First satrapy of the Achaemenid Persia, carried out on a different principle, which differed significantly from the policy that was carried out for other satrapies. In the study of primary sources, it becomes clear that in Lycia there was not any satrapy government. Persian court was establishing military or diplomatic relations with the Lycian cities, of which the most famous was Xanthos – administrative-territorial center of Lycian dynastic system.

Резюме

ЛИКИЯ В СИСТЕМЕ АДМИНИСТРАТИВНОГО ДЕЛЕНИЯ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

Оганнес Г. Хорикян (Гюмри)

Ключевые слова: Геродот, Ликия, ликийцы, Ксанф, сатрапия, политика, сведения, Ахеменидская держава, ликийские города, административно-политические изменения, административное положение, «династический принцип»

Административное управление Ликии, входящей в состав Первой сатрапии Ахеменидской Персии, осуществлялось по другому принципу, который существенно отличался от той политики, которая проводилась в отношении других сатрапий. При изучении первоисточников, становится ясно, что в Ликии не было сатрапийского правления. Персидский двор устанавливал военные или дипломатические отношения с ликийскими городами, из которых самым известным был Ксанф – административно-территориальный центр ликийской династической системы.

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն
է լինելու գիտական
առարկայականութիւնն
ու ճշմարտութիւնը,
միայն ճշմարտութիւնը,
ամբողջ ճշմարտութիւնը՝
համոզած, որ անգամ ամենադառն
ճշմարտութիւնը աւելի օգտակար է,
քան ուկեզօծ ու շաքարապատ
սոստո»:

Սիմոն Վրացեան

բարեկամություն
Հովհաննես Տիգրան

ԱՓՅՈՒՆՔ

Երվանդ Փամբուկյան - Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան - Լիբանան
Հարությոն Քյուրքյան - Հունաստան
Կարո Արմենյան - ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան - ԱՄՆ
Վաչե Բրուտյան - ԱՄՆ

համահայկական հանդես
է (ԺԳ) տարի, 2015,
թիվ 1 (49), հունվար-մարտ

«ՎԵՄ» համահայկական հանդես
Հրատարակից՝ «ՎԵՄ հանդես» ՍՊԸ

375010 Երևան, Մհեր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

✉. үнүүн' khoudinyan@yahoo.com

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

Utopia

ISSN 1829 – 1864